տեղիս՝ ըստ մեծի մասին ի վանօրայս եւ ի քաղաքս վարժարաններ հիմնել եւ բանալ եւ Հայ մանկտին կրթել եւ ուսուցանել:

Արդ այսքանը իբրեւ նախերգանք համարելով՝ պէտք է դիտել եւ քննել զանցեալն Հայաստանեայց եկեղեցւոյ, որում Ազգային եւ Եկեղեցական պատմութիւնք մեր յաւէտ կենդանի վկաներ են:

Անհաւասիկ ապացոյցներ:

Բայց որովհետեւ ցերորդ դար Քրիստոնէութիւնն ի Հայաստան պայծառ հիմք եւ արմատ չէր հաստատած, եւ խառնաշփոթ եւ բազմայոյզ ժամանակներ լինելով հանդերձ՝ տակաւին Քրիստ. տասուածման պատերազմը կմղեր եւ կմրցէր յաղթանակ տանել, վասն որոյ պարտ է երորդ դարու առաջին քառորդէն սկսանիլ եւ քաղել մեր տեսութիւնքը:

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի ՎԵՐԱՑ ՏԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԻ

ՆԱԽԿԻՆ ՀԱՑՈՑ.

(Շարունակութիւն):

Ի:—Այս նախարարների իրաքանչիւրը ունէր մի փոքր պետութիւն եւ հրամայողներ՝ որ իրեն անձնանուէր էին: Ամեն գաւառի հասարակաց եկամուտքն առաջ դիզվում էր նախարարների արկղի մէջ. սոքա պահում էին միշտ նորանից մի մասն մատակարարութիւն տալու իրեանց վերաբերեալ պետական պիտոյից, եւ ուղարկում էին միւս մասն Թագաւորի արկղին: Գաւառների բոլոր պաշտօնքը, նաեւ զինուորական ծառայութիւնքն նախարարներից էին վճարվում: Զօրաց կազմութիւնն նախարարաց էր վերաբերում, բայց մի գաւառի զօրաց դէպ ի միւս գաւառ տեղափոխուիլն կախեալ էր մի սպարապետի հրամանից՝ որոյ անուանումն կամ հրաժարացնելն վերաբերում էր միայնակ Թագաւորին: Նախարարներն պահում էին իւրեանց գաւառներում մի այլ որոշեալ խումբ զօրաց քաղաքի պահպանողութեան համար, եւ տալիս էին միւս խումբերն Թագաւորի կարգադրութեան առ ի լցուցանել նոցա վարձը: Թագաւորներն գործ էին ածում հասարակօրէն զօրքերն պահելու համար իւրեանց պետութեան սահմաններն, ճնշելու ապստամբներն կամ թէ պատերազմ անելու ընդդէմ թշնամւոյն: Գալով մէն մի ներքին պահպանողութեան, այդ պաշտօնն նախարարներն ունէին, եւ պահում էին զայն խումբերի միջոցաւ, որ իւրեանց մօտ էին լինում: Թագաւորի անձն միշտ յանձնուած էր ազգի մի ընտիր գունդի պահպանողութեան: Ամեն մի նախարար ունէր իւր հրամանի տակ եւ պահում էր իւր ծախքով 5, 8, 10, եւ մինչեւ 15 հազար մարդ. քանիցս անգամ տեսել են նոցա պատերազմել միմեանց հետ, մինչ անգամ իւրեանց Թագաւորի հետ, կամ թէ դրացի իշխանութեանց հետ առանց իւրեանց յատուկ վերհապետի հրամանի: Այն նախարարներն՝ որ այսպէս մի քանի հազարաւոր գործեր են արել, միշտ շփոթուել են օտարներից՝ ընդ Թագաւորս երկրին *):

Ը:—Այդ նախարարներն էին մի եւ նոյն ժամանակ փոքր իշխաններ ի հօրէ որդի

(*) Զամչեան Ա. հատ. եր. 214.

ժառանգական. նոցա շքեղութիւնն համահաւասար էր թագաւորի հետ։ Մի գիտուն Յոյն մատենագիր *) նկարագրում է հետագայ կերպիւ այդ նախարարների հագուստն. «Կրումէին, ասում է Պրոկոպ, մի մեկնոց հիւսուած մի ձկան տախտակից՝ որ կոչումէին Պինա, և որ ձգումէ արեգակում պայծառութիւն և ճաճանչք ներկուած զանազան տեսակ հաճոյական գոյներով։ Այդ մեկնոցն կապաւած էր ձախի ուսի վերայ ոսկէ կոճակներով, որոնք զարդարուած էին թանկագին քարերով. ներքք չղթայ հաւասարապէս ոսկիից զարդարուած յակինթներով կախվում էր նորանց կուրծքի վերայ։ Նոցա կրած հագուստն մեկնոցի ներքևից ծիրանեգոյն էր. նոքա մի գօտի ունէին մետաքսից ոսկեծոպերով, և նոցա նռնագոյն կիսակոշիկն բարձրանում էր մինչև ծնկներն։

Ըստ Մովսէսի Խորենացւոյ **)՝ թագաւորի տեղապահներն ևս կարող էին կրնել իւրեանց գլխին մի թագ զարդարեալ թանգագին քարերով, զգենուլ թագաւորական ապարօշ, կոխել ականջագիներ. նոքա կարող էին ուռել թագաւորի սեղանի վերայ ոսկէ զդալով, և խմել նոյնպէս ոսկէ բաժակներով. ըստ վկայութեան Ղազար Փարպեցւոյ *)՝ նորանց միայն պակասումէր թագաւորի մականունն, առանց դորան ևս նոցանէ իւրաքանչիւրն վայելում էր իւր գաւառումն մի վեհապետի բոլոր առաւելութիւնքն, և այդպիսաբար ամենն ունէին իւրեանց որոշեալ բարձն նստելու համար առանի սրահումն թագաւորի հետ **)։

Թ։ — Երշակունեաց առաջին թագաւորների ժամանակ, Հայաստանն բաժանուած էր 24 մեծ գաւառների, որք իւրեանց ընդարձակութեան մասին կոչվում էին երկիր կամ պետութիւն։ Ամեն մի պետութեան մէջ կար երկու կամ երեք նախարարներ, բայց Տիգրան Ա Հռոմայեցիներից յաղթուելն զկնի աւելացրաւ նոցա թիւն և համաշխարհական դարեթուի առաջին դարի միջումն հաշվում էին արդէն 120 նախարարութիւնք Հայաստանի գաւառներումն ***)։ Նահապետաց կամ թէ գաւառաց գլխաւորների թիւն 190 էր Մեծ Հայաստանումն, իսկ Փոքր Հայաստանինն գրէթէ էր միւսի կէսն։ Ընդհանուր դարու վերջումն կար արդէն 400 նախարարական գերդաստանք ****) և այս չափազանց թիւն նպաստեց յոյժ տէրութեան անկման՝ որ քիչ ժամանակից յետոյ պատահեցաւ։

Ժ։ — Թէև Հայաստանի նախարարներն նախանձախնդիր իւրեանց իրաւանց մընացին բազում անգամ թագաւորութեան

(*) Պրօ. յազագս շին. գիր Գ. գլ. 1։

(**) Մովսէս Խոր. Գիրք. Բ գլ. Է. էջ 167։ Վենետիկ։ — Անշուշտ այս բան հայի յայն, որ ասում է Խորենացին Հրեայ Բագարատի համար՝ երբ Վաղարշակ Ա շնորհից նմա «կոչել թագաւորիր և ասպետ և առանց ոսկւոյ և ականց զկրտսեր մարգարիտն երեքակէն վարսակալ ածել»։

Ծ. Թ.

(*) Ղազ. Փար. էջ 140։

(**) Մեսրոպայ պատ. Թագա. գրատ. ձեռագրաց մէջ։

(***) Պլինոս. պատ. բնա. գիր. Զ. գլ. 9։

(****) Մեն ibid.

իշխանութեան դէմ, և կշռէին միշտ նորա կարողութիւնն, այդու ամենայնիւ ոչ սակաւ պատիւ ունէին՝ որպէս ունէր ժողովուրդն դէպի Թագաւորական իշխանութիւն: Սորա անձն և իւր ընտանեաց անդամքն նուիրական էին: Մի անդամն աւելի այս երկրի Թագաւորներն պատերազմ ունեցան նախարարաց հետ. շատ անդամն աւելի սոքա զէնք առին նոցա դէմ, բայց երբէք չը դաւադրեցին նոցա կենաց ոչ Թոյնիւ և ոչ էլ սպանութեամբ: Հայաստանի պատմութիւնն Թունաւորեալ Թագաւորի մի օրինակ է ընծայում, այդ է Տրդատ Թագաւորինն՝ որ առանց նախարարների յօժարութեան ուզից փոխել երկրային կրօնն, և եղև առաջին իշխանն՝ որ հրաման տուաւ յամի 301 Քրիստոնէութեան հասարակական հաստատութիւնն ի բոլոր գաւառս Հայաստանի: Երկրի պատմագիրներն անդամ միաբան չեն այդ Թոյնաւորութեան մասին: Եթէ ճշմարիտ եղած լինէր՝ այդ երկրի բոլոր քրիստոնեայ պատմագիրներն զանց չէին առնել զայն յիշելու, և դորանով պիտի արած լինէին մի արժանաւոր կշտամբանք ապստամբ նախարարներին և բոլոր նորանց՝ որ դեռ յարած էին երկրի հին կրօնքին: Եթէ այս ծանր յանցանքն տեղի ունեցած լինէր, զայն գործած կը լինէին այն շատ հոչակաւոր կրօնափոխութեան ժամանակ՝ և ոչ զինի քառասուն ամաց՝ երբ արքայն արդէն ընկճուած էր ծերութեան հասակի նեղքև:

Երկրի նախարարաց գլխաւորների մինն կոչեցեալ Մանուէլ Մամիկոնեան դերգռուելով վրէժխնդրութեան և ապրստամբութեան մաքով ընդդէմ Պարսից դատ Հայաստանի Թագաւորին՝ պատերազմ բացաւ նորա վերայ 385 Թուին: Ուրիշ նախարարաց նպաստիք գրաւեց մի և նոյն ժամանակ երկրի զօրաց խմբի ընդհանուր հրամանատարութիւնն. բայց Թագաւորն հաւաքեց իւր կողմից մի զօրաց խումբ բաւականաչափ Թուով, և երկու կուսի գունդերն աշտանակեցին ի մարտ: Մի ահարկու պատերազմի մէջ Թագաւորն Թշուառութիւն ունեցաւ անկանիլ մի գնդի կարողութեան ներքոյ՝ որին հրամայուէին այդ մի և նոյն նախարարի որդիքն, որք ուզուէին սպանել. բայց իւրանց հայրը վազից խսկոյն նորանց կոչելով, ''Օդոյշ կացէք՝ երբէք չը լինիք տիրասպան,,: Նախարարն առաւ այն ժամանակ Թագաւորին կեանք և ազատութիւն՝ նորան հայթայթելով հարկաւոր դիւրութիւնքն՝ դուրս գալու տէրութիւնից բոլոր ապահովութեամբ *): Շփոթութեան՝ յեղափոխութեան և կամ անիշխանութեան ժամանակ Թագաւորական ընտանիքն միշտ երկիւղածութեամբ յարգուած էր, և իւր ասպիճանին պարտաւորապատշաճ յարգանօք և ակնածութեամբ պահուած էր: Թագաւորական ընտանեաց երկասեռ բոլոր իշխանազուներին տալիս էին որոշիչ մականուն, Պոպան կամ Պոպանիկ: Այս օրինաց երկրի, նոքա երբէք չէին կարող միջամուխ լինել կառավարութեան տեսական կամ քաղաքական գործոց մէջ, և նոցա անձը ապահով էր կացուցած շփոթութեանց և յեղափոխութեանց վտանգի երևսից:

(Շարունակելի)

Թ. ՕՐ. ՍՕՖԻԱ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

(*) Բաւս. Բիւզ. ibid.